

Լ. ՏՕԼՍՏՈՂ

ԱՄԵՆԱՄԵԾ ՄԵՂՔԸ

Ռուսաստանն այժմ անցնում է մի ժամանակաշրջան, որ ունենալու է ահագին հետեւանքներ:

Մերձեցող յեղաշրջումի անխուսափելի և շատ մօտ լինելն՝ ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ շատ պարզ զգում են հասարակութեան այն խաւերը, որոնք իրանց դիրքի շնորհիւ ազատ են ամեն ինչ կրանող ֆիզիքական աշխատանքի անհրաժեշտութիւնից և հէնց այդ պատճառով էլ հնարաւորութիւն ունեն քաղաքական խնդիրներով զբաղուելու: Դոքա ազնուականներ են, վաճառականներ, աստիճանաւորներ, փաստաբաններ, գլխաւորապէս քաղաքացիք, որոնք կոչոււմ են ինտէլիգէնցիա և որոնք այժմ Թուսաստանում՝ ղեկավարում են տեղի ունեցած շարժումը և իրենց ամբողջ ոյժերը գործ են դնում գոյութիւն ունեցող քաղաքական կազմը փոխելու և այնպիսի նոր կազմակերպութեամբ փոխարինելու, որը այս կամ այն կուսակցութեան կողմից համարուում է առաւել նպատակայարմար և ուստի ժողովրդի համար ազատութիւն և բարիք բերող: Այդ մարդիկն անընդհատ զրկանք կրելով կառավարութեան ճնշումներից ու բռնութիւնից, դատապարտուելով փարչական աքսորների, բանտարկութեան, հանդիպելով դրքեր և լրագիրներ հրատարակելու, ընկերակցութիւններ կազմակերպելու, ժողովներ գումարելու, գործադուլներ կազմակերպելու ժամանակ բաղմատեսակ արգելքների, դանազան ազգութիւնների իրաւանց սահմանափակումներին, և այլն, և որոնք ապրում են ուստի երկրագործ ժողովրդին խորթ կեանքով, բնականաբար այդ սահմանափակումների մէջ տեսնում են ամենամեծ չափեր և նրանից ազատուելու մէջն են տեսնում ուստի ժողովրդի ամենամեծ բարիքը:

Այն ինչ բաւական է գէթ ժամանակաւորապէս հրա-  
 ժարուել մեր ինտէլիգէնցիայի մէջ արմատացած այն մտքից,  
 որ Ռուսաստանը պարտաւոր է առանց յետաձգելու մտցնել  
 քաղաքական այն ձևերը, որոնք մտցրած են Եւրոպայում  
 և Ամերիկայում, որոնք իբր թէ ապահովում են բոլոր  
 քաղաքացիներին բարիքը, այլ պարզապէս մտածել այն  
 մասին, ինչ որ մեր կեանքում բարոյապէս վատ է, որ  
 միանգամայն պարզ տեսնենք այն գլխաւոր չարիքը, որից  
 անընդհատ տանջուում է ամբողջ ռուս ժողովուրդը, չարիք,  
 որ նա պարզ գիտակցում է և որի մասին անընդհատ յայ-  
 տարարում է և որը ոչ մի քաղաքական բարենորոգումներով  
 չի վերացուել, ինչպէս նա չի վերացուել ցայժմս Եւրո-  
 պայում և Ամերիկայում մտցրած բէֆորմներով: Այդ չա-  
 րիքը հիմնական չարիք է, որից ռուս ժողովուրդը տանջուում  
 է նոյնպէս, ինչպէս և Եւրոպայի և Ամերիկայի ազգերը,  
 այդ չարիքը ազգի մեծամասնութիւնը իւր բնական և  
 անուրանալի իրաւունքից զրկուած լինելու, այն հողաբաժ-  
 նից օգտուելու իրաւունքից զրկուած լինելու մէջն է, որտեղ  
 նա ծնուել է: Բաւական ըմբռնել այդ դրութեան յանցաւոր  
 և ծանր մեղք լինելը, որպէս զի հասկանանք, որ մինչև  
 վերջ չը դրուի հողային սեփականատէրերի կողմից գործուող  
 այդ չարագործութեան. քաղաքական ոչ մի բարենորո-  
 գումներ ազատութիւն և երջանկութիւն չեն տալ ժողո-  
 վրդին, այլ ընդհակառակն՝ մարդկանց ազատելով միայն  
 հողային այդ ստրկութիւնից, որի մէջ նրանք գտնուում են,  
 կարելի կլինի դարձնել քաղաքական բէֆորմները ոչ թէ  
 խաղալիք և անձնական նպատակներին գործիք, այլ ժողո-  
 վրդական կամքի իսկական արտայայտութիւն:

Ահա այս միտքն եմ ուզում յայտնել ներկայ յօդուա-  
 ծովս աջն մարդկանց, որոնք Ռուսաստանի այս նշանաւոր  
 բոսպէին անկեղծօրէն ցանկանում են ռուս ժողովրդի իս-  
 կական բարիքներին և ոչ թէ իրենց անձնական նպատակ-  
 ներին:

## I.

Մի անգամ ծաղկազարդի շաբաթ օրը գնում էի Տուլա խճուղու մեծ ճանապարհով: Ժողովուրդը խմբերով գնում էր վաճառանոց՝ սայլերը լցրած հաւերով, կովերով և ձիաներով. կովերից մի քանիսը այնքան նիհար էին, որ տանում էին սայլերով: Կնճռադէմ պառաւը տանում էր նիհար և բրդաթող մի կով: Պառաւը ծանօթս է. ես հարցնում եմ, թէ ո՞ր է տանում կովը.

— Կաթ չունի, պէտք է ծախել և կաթով կով առնել: Երևի մի տասնոց վերադիր կը հարկաւորուի, իսկ ես միայն հինգ մանէթ ունիմ: Ո՞րտեղից գտնեմ, Զմեռը 18 մանէթի արիւր ենք գնել, իսկ աշխատողը մի հողի է: Ապրում եմ հարսիս հետ միայնակ, ունիմ չորս թոռներ, իսկ որդիս քաղաքում դռնապանութիւն է անում,

— Որդիդ ինչո՞ւ տանը չի մնում.

— Ապրելու հնար չկայ: Ի՞նչ հող ունինք որ: Թի՛սը ջրի բաժին բան է (մի թիղ է):

Գնում է մի գիւղացի, որի փեշերը կաւոտ են, ինքը նիհար ու գունատ:

— Ի՞նչ գործով ես քաղաք գնում, հարցնում եմ ես:

— Ուզում եմ ձի առնել. հերկի ժամանակ է, այն ինչ ձի չունիմ. բայց ասում են, որ ձիաները թանկ են:

— Իսկ դու քանիսով ես ուզում առնել:

— Փողիս գետրա:

— Ի՞նչքան ունիս:

— Մի տասն և հինգ մանէթ դրստել եմ:

— Հիմա տասն և հինգ մանէթի ինչ կարող ես առնել: Դա մարթու գին է, ասում է մի ուրիշ գիւղացի, խօսքին միջամտելով:— Ում հանքումն ես աշխատում, հարցնում է նա, նայելով կարմիր կաւով ներկած անդրավարտիկին:

— Կամարով Իւան Մոսէիչի մօտ:

— Ի՞նչպէս է, շատ գործ ես շինել:

— Կիսովի էի բանում:

— Կանոնաւոր վաստակ կար, հարցրի ես:

— Շարաթական երբեմն երկու ուղիքի և երբեմն մի քիչ պակաս էի դրստու՛մ: Ի՞նչ արած, հացը մինչև ծննդեան տօնը հա իւ բաւականացաւ: Առնելով հոգիս դուրս է գալիս:

Մի փոքր առաջ երիտասարդ գիւղացին տանում է վաճառելու լաւ պահած մի սիրուն ձի:

— Բաւական լաւ ձի է, ասացի ես:

— Շատ լաւն է, բայց պահելու տեղ չունիմ, պատասխանեց նա, կարծելով, որ ես ուզում եմ գնել:— Թէ հերկելու և թէ նստելու համար շատ լաւ է:

— Աւրեմն ինչո՞ւ ես ծախում:

— Կարիք չունիմ: Ի՞նչ արած, երկու կտոր հող ունիմ, որը մի ձիով եօլա եմ տանում, իսկ ձմեռ ժամանակ թողի և ուրախ չեմ: Շինած գործից շատ կերաւ: Համ էլ փող է հարկաւոր կապալագիւնը վճարելու համար:

— Հողը դուք ումից էք կապալով վերցնում:

— Մարիա Իւանովնայից, շնորհակալ եմ, որ տուեց, ապա թէ ոչ վրձներիս պէտք է թոկ դցէինք:

— Քանիսի էք վերցնում:

— Սոմարին 14 ուղի է պոկում, ինչ կանես, սըր կերթաս, ճարահատուած վերցնում ենք:

Գնում է մի կին շափխայով տղայի հետ: Նա ինձ ճանաչում է, վայր է իջնում սայլից և առաջարկում տղային վերցնել ինձ մօտ ծառայութեան: Տղան դեռ շատ փոքր է, խելօք և աշխոյժ աչքերով:

— Նա այնպէս՝ տեսքով փոքր է, բայց ամեն բան կարող է անել:— ասում է նա:

— Ինչո՞ւ ես այդքան փոքրիկին ծառայութեան տալիս:

— Ինչ անեմ պարօն, գոնէ նրա բաժին հացը մեզ կը մնայ: Ես չորս գաւակ ունիմ, հինգ հոգի ենք, բայց մի կտոր հող ունիինք: Հաւատացէք Աստուծուն, որ շատ անգամ սոված ենք մնում: Երեխաներս հաց են ուզում, բայց տալու բան չունիմ:

Ում հետ էլ խօսում ես, ամենքն էլ խօսում են կարիքի մասին և ամեն կողմից դալիս են միեւնոյն միակ

պատճառի. հացը չի բաւականանում. իսկ հացը բաւական չի լինում, որովհետև հող չունինք:

Բայց այդ պատահական հանդիպումներ են մեծ ճանապարհին: Անցէք Ռուսաստանի մի ծայրից միւսը գիւղացիների միջով և թափանցեցէք և ուսումնասիրեցէք աղքատութեան բոլոր սարսափները, բոլոր տանջանքները, որոնք առաջ են գալիս շատ պարզ պատճառից. երկրագործ ժողովրդից խլուած է հողը: Ռուս գիւղացիութեան մեծագոյն մասն այնպէս է ապրում, որ նրան ոչ թէ հետաքրքրում է այն հարցը, թէ ինչպէս բարւոքի իւր կացութիւնը, այլ այն, որ նա իւր ընտանիքով սովից չը մեռնի և այդ նրա համար, որ նրանք հող չունին:

Անցէք Ռուսաստանը ծայրէ ի ծայր և հարցրէք բոլոր աշխատաւոր ժողովրդին, ինչո՞ւ է նա վատ ապրում, ինչ է նրան հարկաւոր և նրանք միաձայն կասեն միևնոյնը, այն ինչի մասին, որ ամենքը մտածում և ցանկանում են անընդհատ, ինչի մասին որ միշտ մտածում և յոյս են տածում:

Եւ նրանք չեն կարող չը մտածել և չը զգալ այդ, որովհետև չը խօսել գլխաւոր բանի՝ հողի սակաւութեան մասին, որպէս զի կերակրուիլ կարողանան, նրանց մեծագոյն մասը չի կարող իրեն ստրուկ չը զգալ այն հողատէրերի, վաճառականների և ազնուականների, որոնք իրենց հողերով շրջապատել են նրա փոքրիկ հողաբաժինները և նրանք չեն կարող չը մտածել, չը զգալ այդ, որովհետև ամեն լոպէ մի պարկ խոտի, մի բուռը վառելիքի, առանց որի նրանք ապրել չեն կարող, սինօրն անցած մի ձիւհամար կրում են ամեն տեսակ նեղութիւն, ծեծ, զրկանք և տանջանքներ են վճարում:

Մի անգամ պատահամաբ էս սկսայ խօսել ճանապարհին մի կոյր ու աղքատ գիւղացու հետ: Խօսքիցս հասկանալով գրագէտ լինելս, հասկանալով որ լրագիր եմ կարգում, բայց ինձ պարօնի տեղ չընդունելով, նա կանգ առաւ և լուրջ դիրք ընդունելով հարցրեց:

— Ի՞նչ է, լուր չկայ:

ես հարցրի. ինչի՞ մասին:

— Իշխանութեան հողի մասին:

— Ես պատասխանեցի, որ ոչինչ չեմ լսել:

Կոյրը գլուխը շարժեց և այլ ևս բան չը հարցրեց:

— Հը, ի՞նչպէս է. հողի մասին խօսում են, հարցրի ես նորերս իմ նախկին աշակերտ, հարուստ, խելօք ու ծանրաբարոյ գրագէտ գիւղացուն:

— Ինչպէս չէ. ժողովուրդը խօսում է:

— Իսկ դու ի՞նչ ես կարծում:

— Պէտք է որ հողերը կտրեն. ասաց նա և գիւղացիներին բաժին հանեն,

Կատարուող բոլոր դէպքերից դա ամենանշանաւորն է և հետաքրքիր ամբողջ ժողովրդի համար և նա հաւատում է, չի կարող չը հաւատալ, որ հող կըստանայ:

Նա չի կարող այդ բանին չը հաւատալ, որովհետեւ նրա համար պարզ է, որ երկրագործութեամբ ապրող և աճող ժողովուրդը, որն ապրում է հողագործութեամբ չի կարող շարունակել իւր գոյութիւնը, երբ նրան մնացել է փոքրիկ հողաբաժին, որով նա պէտք է կերակրուի ինքը և կերակրի այն մակաբոյժներին, որոնք կպել են նրան, սողում են նրա վրայ և ծծում են նրա հիւթը:

## II.

«Ի՞նչ է մարդս», ասում է Հէնրի Ժորժը իւր յօդուածներից մինում\*։ Ամենից առաջ հողեղէն կենդանի է, որը չի կարող առանց հողի ապրել։ Այն բոլորը, ինչ որ արտադրում է մարդս, ստացւում է հողից, ամբողջ արգիւնաբերող աշխատանքը, եթէ վերլուծելու լինինք, վերջի վերջոյ կը հանգի հողագործութեան և այն նիւթերի արգիւնաբերութեան, որոնք ստացւում են կրկին հողից և որոնց արւում է այն ձևը, որը հարկաւոր է մարդկային

\* Հէնրի Ժորժի ճառեր և յօդուածներ, հրատ. Պօսրեղնիկի, Երևա 143 և 144.

կարիքներին և ցանկութիւններին բաւարարութիւն տալու համար: Մարդուս մարմինն իսկ վերցնում է հողից. նրանից վերցուած ենք և կրկին նրան էլ պէտք է դառնանք: Խլեցէք մարդուց այն բոլորը, ինչ որ պատկանում է երկրին և ինչ կը մնայ քեզ բացի աննիւթ հողուց:

Այդ պատճառով էլ ով որ տիրում է այն հողին, որի վրայ պէտք է ապրի և որից պէտք է կերակրուի մի ուրիշը, հանդիսանում է տէր այդ երկրորդի և վերջինս առաջինի ստրուկն է:

Այն հողի տէրը, որի վրայ որ ևս պէտք է ապրեմ, կարող է անօրինել ապրել չապրելս նոյնքան ազատ, որքան ազատ կլինէր, եթէ նրան պատկանէր մարմինս:

Մենք խօսում ենք ստրկութիւն վերացնելու մասին, բայց մենք ստրկութիւնն իրօք չենք ոչնչացրել, մենք փոխել ենք միայն նրա կոպիտ ձևը, անձնական ստրկութիւնը: Այժմս մենք պէտք է վերացնենք ստրկութեան աւելի նուրբ, աւելի դաժան, աւելի անիծեալ ձևը, այն արդիւնաբերական ստրկութիւնը, որը մարդուս իրապէս ստրուկ է դարձնում, մինչդեռ փաստաբանում է նրա ազատութիւնը:

Ամենաանհեթեթ և անմիտ երևոյթներից մէկն էլ այն է, ասում է մի ուրիշ տեղ Հենրի Ժորժը, որ աշխատաւոր՝ բանուոր դասակարգը բոլոր քաղաքակիրթ երկիրներում ամենաաղքատն է և այդ մեղ չի զարմացնում, որովհետև այդ երևոյթը մեղ համար սովորական է դարձել, մենք այդ բանին սովորել ենք: Եթէ որ և է խոհուն արաբած, որը դեռ երկրիս վրայ չի եղել, որ և է հրաշքով ցած իջնէր և դուք նրան բացատրէիք մեր կեանքը, բացատրէիք թէ աշխատանքով ինչպէս են ստեղծում տներ, սնունդ, շորեր և առհասարակ մեր կեանքի համար կարևոր իրերը, այդ էական իսկոյն կը մտածէր, որ ուրեմն այդ բոլորի տէրն այն մարդիկն են, որոնք և ստեղծում, շինում են այդ բոլորը, հետևապէս և ապրում ամենալաւ տներում և իրենց աշխատանքով ստեղծած իրերից ամենաշատը իրենք ունեն: Այն ինչ Լօնդօնում, Փարիզում,

Նիւեօրքում, ամեն տեղ, նոյն իսկ միջակ քաղաքներում՝ ամենախիղճուկ բնակարաններում՝ բանուօրներն են ապրում։ Նոյնը առաւել մեծ չափով տեղի ունին գիւղերում, կաւելացնէի եւս։ Անգործ մարդիկ ապրում են շքեղ պալատներում, ընդարձակ, դեղեցիկ բնակարաններում։ Աշխատաւորներն ապրում են մութ ու կեղտոտ խրճիթներում։

Արժէ մտածել այդ զարմանալի երևոյթի ժամին։ Մենք ակամայից ատում ենք խեղճութիւնը։ Եւ իսկապէս պէտք է ատել այն։ Բնութիւնը վարձատրում է մի միայն աշխատանքը։ Հարստութեան ոչ մի առարկայ չի կարելի արտադրել առանց աշխատանքի մասնակցութեան և իրերի բնական ընթացքի ժամանակ բարեխիղճ և հմուտ կերպով աշխատող մարդը պէտք է հարուստ լինի, իսկ չաշխատողը — աղքատ։ Բնութեան այդ կարգը մենք յեղաշրջել ենք և մեր աշխատաւոր մարդիկ խեղճ են, իսկ անգործները — հարուստ։ Ինչո՞ւ է այս այսպէս։

Նրանից է, որ մենք աշխատող մարդկանց հարկադրում ենք վարձ տալ ուրիշներին նրա համար, որ նրանք թոյլ են տալիս աշխատել։ Դուք առնում էք բաճկոն, ձի, բնակարան դուք վճարում էք աշխատանքի արտադրութեան արժէքը, այն աշխատանքի, որը գործ է դրել վաճառողը, կամ գնել ուրիշ մարդկանցից։ Բայց ինչու համար էք դուք վճարում այն մարդուն, որին վճար էք տալիս հողի համար։ Դուք նրան վճարում էք այն բանի համար, ինչ որ չի արտադրել մարդկանցից ոչ ոք, որը գոյութիւն է ունեցել մարդուն (ստեղծագործութիւնից) երևան գալուց առաջ, այն արժէքի համար, որը ոչ թէ որ և է անհատի, այլ այն համայնքի ստեղծագործութիւնը, որի անդամներից մէկն էլ դուք էք. այդ պատճառով էլ հարուստը նա է, ով որ յափշտակել է հողը և տիրում է նրան, իսկ աղքատ նա է, ով որ աշխատում է այդ հողի կամ նրա արտադրութեան վրայ։

Մենք խօսում ենք աւելորդ արտադրութեան մասին. բայց ինչ խօսք կարող է լինել աւելորդ արտադրութեան

մասին, երբ ժողովուրդը կարիք ունի ամենաանհրաժեշտ բաների. ժողովուրդը կարիք ունի այն իրերի, որոնք իբրև թէ արտադրուած են աւելի քանակութեամբ: Ինչո՞ւ նա ձեռք չի բերում այն: Ոչ թէ նրա համար, որ նա կարիք չունի, այլ այն պատճառով որ նա զուրկ է այն ձեռք բերելու կարևոր միջոցներից:

Որովհետև նրա վաստակը շատ չնչին է: Իսկ վաստակը քիչ է այն պատճառով, որ նա իւր աշխատանքի մի մասը վճարում է հողատէրերին: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ բազմաթիւ ապրանքների մեծագոյն մասը մնում է անվաճառ, երբ մարդկանց ահագին բազմութիւնը ստիպուած է աշխատել Ամերիկայում օրական երկու ուրբի յիսունով, իսկ Ռուսաստանում 50 կոպէկով: Ինչո՞ւ են այդ մարդիկն այդչափ չնչին օրավարձով աշխատում: Նրա համար, որ եթէ նրանք աւելի մեծ վարձատրութիւն պահանջէին, իսկ նրանց կը վսխարինէին ուրիշներով: Միշտ պատրաստ կանգնած են անգործ մարդկանց խմբեր և ահա այդ անգործ մարդիկն են իջեցնում աշխատանքի վարձը իսկապէս մի փոք հացի: Բայց ինչո՞ւ գոյութիւն ունին մարդիկ, որոնք չեն կարողանում իրենց համար աշխատանք գտնել: Միթէ տարօրինակ չէ այս երևոյթը, մարդիկ չեն կարողանում գործ գտնել: Աղամբ դժուարութիւն չէր զգում աշխատանք գտնելու. նոյնպէս դժուարութիւն չէ կրում Ռօբենզօն Կրօնզօն, աշխատանք գտնելը նրանց հոգսերից ամենավերջին գործն էր:

Եթէ մարդիկ չեն կարողանում աշխատանք (գործ) տուող գտնել, ինչու իրենք իրենց գործատու չեն դառնում: Շատ պարզ պատճառով. որովհետև նրանք կարուած են այն բանից, առանց որի ոչ մի աշխատանք չի կարելի. մարդիկ ստիպուած են մրցել իրար հետ խաղէիններից վճարուող օրավարձի պատճառով, որովհետև նրանք բռնի զրկուած են այն բնական յարմարութիւններից, որոնցով օգտուելիս իրենք պէտք է իրեն տէր ու խաղէյին լինէին. որովհետև նրանք Աստուծոյ արար աշխարհում տեղ չունին, ուր կարողանային աշխատել, առանց ուրիշներին

վարձ վճարելու այն պատճառով, որ իրենց թոյլատրում են աշխատել:

Մարդիկ աղօթում են Աստուծուն, որ Նա թեթևացնի աղքատութիւնը: Բայց աղքատութիւնն Աստուծոյ օրէնքներին առաջ չի դալիս, այդպէս բան ասել, նշանակում է ամենաստոր անարդարութիւն անել Աստուծոյ դէմ: Աղքատութիւնն առաջ է դալիս մարդու անարդարութիւնից դէպի իւր մերձաւորը: Ընդունենք մի բոպէ, որ Աստուած լսէր մարդկանց աղօթքը. բայց Նա ինչպէս կը կարողանար կատարել նրանց խնդիրը՝ պահպանելով իւր դրած օրէնքներն՝ այնպէս, ինչպէս որ նրանք կան: Չէ որ Աստուած մեզ ոչինչ չի տալիս այն բանից, ինչ որ կազմում է հարստութիւնը: Նա տալիս է մեզ մի միայն հում նիւթ, որը մշակում է մարդս և դարձնում հարստութիւն: Իսկ այժմ այդ հում նիւթից միթէ քիչ է տալիս: Եւ եթէ նա շատ տար այդ հում նիւթից, ինչպէս կարող էր թեթևացնել աղքատութիւնը: Ընդունենք, որ աղօթքը լսուած է և Նա աւելացրել է արևի ոյժը կամ երկրի պտղաբերութիւնը, բոյսերը դարձնէր աւելի պտղաբեր և կենդանիներին աւելի արագ աճելու հնարաւորութիւն տալ: Ում օգտին կլինէր այդ բոլորը այնպիսի մի երկրում, որտեղ հողը մասնաւոր տէրերն են յափշտակել: Ի հարկէ այդ կլինէր մի միայն յօգուտ հողային սեփականատէրերի: Նոյն իսկ եթէ Աստուած երկնքից պատրաստի ուղարկէր մարդկանց այն առարկաները, որոնք հարկաւոր են նրանց, այդ դէքումն էլ բոլորը դարձեալ միայն յօգուտ հողատէրերի կլինէր:

Հին կտակարանում նկարագրուած է, թէ ինչպէս հին ժամանակներում իսրայէլացիք անապատում թափառելիս սովից նեղուում էին և ինչպէս Աստուած նրանց երկնքից մանանայ ուղարկեց: Նա բոլորին բաւական էր, ամենքը հաւաքում էին այն կշտանում: Բայց ընդունենք, որ այդ անապատը մասնաւոր սեփականութիւն լինէր, ժողովուրդը ինչ օգուտ պէտք է ստանար մանանայից, եթէ իսրայէլացիներին մի մասը մղոնների տէր լինէր, իսկ միւսները մի թիղ հող էլ չունենային: Աստուած ինչքան

էլ մանանայ ուղարկէր, նա կը դառնար հողատէրերի սեփականութիւն. նրան կը վարձէին մի քանի հողի այդ մանանան կիտելու և կը վաճառէին այն իրենց սոված եղբայրներին: Եւ մանանայի առևտուրն այնքան կը շարունակուէր, մինչև որ խրայէլացուց մեծագոյն մասը կուտէր իւր ամբողջ ստացուածքը: Իսկ այնուհետև և նրանք կը դատապարտուէին սովի այն ժամանակ, երբ մանանան կիտուած կլինէր ահագին քանակութեամբ և հողատէրերը կը գանգատէին, որ նա արտադրուած է աւելի քանակութեամբ, ճիշտ նոյնը կլինէր, ինչ որ մենք տեսնում ենք մինչև մեր օրերը:

Ես այս բոլորն ասում եմ ոչ թէ նրա համար, որ մենք վերջ տալով այս անարդարութեանը, ձեռքերնիս ծալած նստենք, այլ ես ասում եմ, որ հողատիրութեան օրէնքի հարցը կազմում է միւս բոլոր հասարակական խնդիրների հիմքը: Ես ասում եմ այն, որ մենք կարող ենք մտցնել ցանկացած բէֆօրմներ, բայց մենք չենք ազատուիլ համատարած աղքատութիւնից, մինչև որ բոլոր մարդկանց ապրուստի աղբիւր հողը կը մնայ քանի մարդկանց մասնաւոր սեփականութիւն և մարդկանց վիճակը բարելաւելու մեր բոլոր ճիգը կը մնայ ապարդիւն: Փոփոխեցէք կառավարութեան մեխանիզմը (կազմը), կրճատեցէք տուրքերը վերջին աստիճանի, շինեցէք երկաթուղիներ, հիմնեցէք ընկերական սպառողական կրպակներ, բաժանեցէք արդիւնքը, ինչպէս ձեր սիրտն է ուզում, նախաձեռնողների և բանւորների մէջ և ի՛նչ հետևանք կըստանաք: Հետևանքն այն կլինի, որ հողի արժէքը անընդհատ կը բարձրանայ, ահա այդ կլինի հետևանքը և ուրիշ ոչինչ:

Մեզ այդ ցոյց է տալիս փորձը:

Միթէ բոլոր բարեկարգութիւնները չեն բարձրացնում հողի արժէքը, այն, ինչ որ մարդիկ պէտք է վճարեն միւսներին երկրիս վրայ ապրելու իրաւունքի համար:

Ես կաւելացնեմ, որ մենք նոյն բանն ենք տեսնում Ռուսաստանում: Բոլոր հողատէրերը գանգատում են կալուած ունենալու անշահաւէտութեան, եկամտի սակա-

ւութեան մասին, իսկ հողի գինն անընդհատ բարձրանում է: Նա չի կարող չը բարձրանալ, որովհետև ազգաբնակչութիւնն աճում է, իսկ հողը նրա կեանքի և մահուան խնդիրն է:

Այդ պատճառով էլ ժողովուրդը վճարում է, ինչ որ միայն կարող է, ոչ թէ միայն իւր աշխատանքը, այլ և իւր կեանքը հող ձեռք բերելու համար, որից նրան զուրկ են պահում:

### III.

Գոյութիւն ունէր մարդկերութիւն, մարդկային գոհարեութիւն, կրօնական անառակութիւն, թոյլ մանուկները և աղջիկները ոչնչացումը, արեան վրէժխնդրութիւն, ամբողջ ազգաբնակչութեան կոտորած, դատաստանական տանջանքներ, չորս կտոր անելը, խարոյկների վրայ այրելը, մտրակը, մեր աչքի առաջ անյայտացած մեխապատ լախտիներ (шпицрутены), ստրկութիւն: Բայց եթէ մենք անց ենք կացրել այդ շրջանները, դեռ այդ չի նշանակում, որ մեր մէջ այլ ևս գոյութիւն չունին լուսաւորուած մտքի և խղճի տէր մարդկանց համար նոյնքան ատելի հիմնարկութիւններ և սովորութիւններ, ինչպէս իւր ժամանակին ոչնչացրածները, որոնք յիշելու համար անգամ սոսկալի են դարձել: Մարդկութեան կատարելագործութեան ուղին անվերջ է. և պատմական կեանքի իւրաքանչիւր րոպէին գոյութիւն ունին նախապաշարուսներ, խաբեբայութիւն, փաստակար ու չար հիմնարկութիւններ, որոնք եղել են անցեալում: Կան այնպիսիք, որոնց մենք երևակայում ենք ազօտ կերպով հեռաւոր ապագայում և այնպիսիք, որոնք գոյութիւն ունին այժմ և օրօւայ խնդիր են կազմում: Այդպէս է մեր ժամանակ մահուան պատիժը, և առհասարակ պատիժները, այդպէս է անառակութիւնը, մսակերութիւնը, զինուորութիւնը, պատերազմը և այդպէս է ամենամօտ և հրատապ գործը—հողային մասնաւոր սեփականատիրութիւնը:

Բայց ինչպէս որ սովորութիւն դարձած բոլոր անարգարութիւններէն մարդիկ ազատոււմ էին ոչ թէ յանկարծակի, ոչ թէ հէնց իսկոյն, երբ ամենազգայուն մարդիկ ճանաչոււմ էին նրանց վնասակարութիւնը, այլ մէջ ընդ մէջ, թախչքներով, կանգ առնելով, վերագարձներով և ազատագրութեան նոր հասանքներով, որոնք նման են եղել երկունքի ցաւերին. ինչպէս այդ տեղի ունեցաւ մերձաւոր անցեալում ստրկութիւն ոչնչացնելիս, այդ նոյնը տեղի ունի այժմս մասնաւոր հողատիրութեան վերաբերութեամբ,

Մասնաւոր հողատիրութեան վնասակարութեան և անարգարութեան մասին մեզանից հազարաւոր տարիներ առաջ մատնանիշ են եղել հին դարերի իմաստուններ և մարդարէներ: Դրանից յետոյ աւելի յաճախ այդ չարիքի վրայ մատնանիշ են արել Եւրոպայի գիտնականներ, այդ բանի վրայ աւելի պարզօրէն մատնանիշ էին լինում ֆրանսիական յեղափոխութեան դորժիչներ: Իսկ վերջին ժամանակներս շնորհիւ ազգաբնակչութեան աճման և հարուստ մարդկանց կողմից ազատ հողերի յափշտակութեան, շնորհիւ ընդհանուր կրթութեան և բարքերի մեղմացման, այդ անարգարութիւնն այնքան ակներև դարձաւ, որ ոչ թէ միայն առաջաւոր, այլ և ամենասովորական կարգի մարդիկ չեն կարող չը տեսնել և չը զգալ այն: Բայց մարդիկ, մանաւանդ նրանք որոնք օգտուում են հողային սեփականատիրութեան արգասիքներով, այնքան սովորել են իրերի այդիօի կացութեան, այնքան երկար են նրանից օգտուել և այն աստիճան կարիք ունեն այդ բանի, որ յաճախ իրենք չեն տեսնում նրա անարգարութիւնը և ամեն միջոց դորժ են դնում ծածկելու իրենցից և շրջապատողներից այդ աւելի և աւելի պայծառ կերպով հանդէս եկող ճշմարտութիւնը, ճնշել, հանդցնել, այլանդակել այն, իսկ երբ այդ չի օգնում, լռել նրա մասին:

Այդ տեսակէտից զարմանալի է անցեալ դարու վերջին հանդէս եկած մարդու՝ հէնրի Ժօրժի դորժունէու-

թեան վախճանը, որն իւր հոգեկան ահագին ոյժերը նուիրել է հողային մասնաւոր սեփականատիրութեան անգթութիւնը լուսաբանելու և այդ՝ ներկայումս բոլոր պետական կազմերի ժամանակն էլ գոյութիւն ունեցող անարդարութիւնը վերացնելու միջոցները գտնելու և ցոյց տալու վրայ: Նա այդ արաւ իւր գրքերով, յօդուածներով ու ճառերով այնպիսի անսովոր ոյժով և պայծառութեամբ, որ կանխակալ կարծիքներից ազատ մարդը, կարգալով նրա գրքերը, չի կարող չը համաձայնիլ նրա եղբակացութիւնների հետ, չի կարող չը տեսնել, որ ոչ մի բարենորոգումն չի կարող բարւոքել ժողովրդի վիճակը, մինչև որ չը ոչնչանայ այդ հիմնական անարդարութիւնը և որ նրա այդ նպատակով առաջարկած միջոցները խելացի են, արդար և հեշտ իրագործելի:

Եւ ինչ, Չընայած, որ Հենրի Թօրփի անգլիական հեղինակութիւնները երևան գալուն պէս շատ արագ տարածուեցին անգլո—սակս աշխարհում և չէին կարող չը գնահատուիլ համաձայն իրենց բարձր արժանիքների, այնուամենայնիւ շատ շուտով Անգլիայում և նոյն իսկ Իրլանդիայում, որտեղ ամենախիստ կերպով արտայայտուած էր մասնաւոր հողատիրութեան անարդարութիւնը, այնուամենայնիւ ազդեցիկ ինտելիգէնցիայի մեծ մասը, հակառակ Չորջի բերած ապացոյցների համոզեցուցիչ և հեշտ գործադրելի լինելուն, հակառակեց նրա վարդապետութեան: Պարնէլի պէս արմատական գործիչները, որոնք սկզբում համակրանքով էին վերաբերուում Չորջի նախագծին, շուտով հեռացան նրանից և աւելի կարևոր համարեցին քաղաքական բարենորոգումներ: Անգլիայում նրա դէմ էին համարեա բոլոր արեստոկրատներ (հարստագիտականներ) և ի միջի այլոց հռչակաւոր Դօիբեն, Դլադստօնը, Հերբերտ Սպէնսերը, այն Սպէնսերը, որն իւր յօդուածներում շատ պարզ կերպով յայտնեց հողային սեփականատիրութեան անարդարութիւնը, յետոյ հրաժարուեց իւր այդ կարծիքից և յետ էր գնում իւր հրատարակութիւնները, որպէս զի դուրս ձգէր նրանցից այն բոլորը, ինչ

որ վերաբերում էր հողային սեփականատիրութեան անարգարութեան:

Օկսֆորդում ուսանողները Ջորջի դասախօսութեան ժամանակ թշնամական ցոյցեր արին: Կաթոլիկ կուսակցութիւնը Հենրի Ջորջի վարդապետութիւնը համարում էր անբարոյական մեղաւոր, վտանգաւոր և քրիստոնէական վարդապետութեան հակառակ: Նոյն ձևով հակառակեց Ջորջին և քաղաքատնտեսութեան օրթոդոքս գիտութիւնը: Գիտնական ուսուցչապետներն իրենց մեծութեան բարձրութիւնից հերքում էին այդ վարդապետութիւնը, չէին հասկանում այն գլխաւորապէս այն պատճառով, որ նա չէր ընդունում նրանց կեղծ գիտութեան հիմնական սկզբունքները: Հակառակ էին նաև ընկերավարականներ (սոցիալիստներ), որոնք ժամանակի ամենագլխաւոր խնդիրն էին համարում՝ ոչ միայն հողային, այլ առհասարակ մասնաւոր սեփականութիւն ոչնչացնելը: Բայց Հենրի Ջորջի դէմ գլխաւորապէս գործադրում էր այն միջոցը, որը միշտ գործ է դրում միանգամայն պայծառ և անհերքելի ճշմարտութիւնների դէմ, Հենրի Ջորջի դէմ գործադրուող այդ միջոցը. որը գեռ ցայսօր էլ շարունակուում է, նրա մասին լռելն էր: Եւ այդ կատարում էր այնպիսի յաջողութեամբ, որ անգլիական պարլամէնտի անդամ Լաբուշէրը կարողացաւ հրապարակաւ ասել առանց հակաճառութեան, որ ինքը այնպիսի ցնորամիտ չէ, ինչպէս Հենրի Ջորջը, որ նա չի առաջարկել խել հողը կալուածատէրերից, որպէս զի այնուհետև կապալով տայ մարդկանց, այլ նա կը պահանջի տուրք սահմանել հողի արժէքների վրայ: Այսինքն Հենրի Ջորջին վերագրելով այն, ինչ որ նա երբէք ասել չէր կարող, Լաբուշէրը որպէս սրբագրութիւն այդ կեղծ ցնորքների՝ այն էր ասում, ինչ որ իսկապէս ասել էր Ջորջը:

Այնպէս որ՝ շնորհիւ այն մարդկանց միացած ճիգերի, որոնք ցանկանում էին պահպանել հողային սեփականութիւնը, Հենրի Ջորջի անհերքելի պարզ ու պայծառ վարդապետութիւնը համարեա մնում է անյայտ և վերջին

տարիներս աւելի և աւելի քիչ ուշադրութիւն է դարձնում  
իւր վրայ:

Շօտլանդիայում Պօրտուգալիայում և Նոր Զելանդի-  
այում մի քանի տեղ յիշում են նրա մասին և հարիւ-  
րաւոր գիտնականների մէջ հանգէս է գալիս մէկը, որը  
գիտէ և պաշտպանում է Զորջի վարդապետութիւնը: Իսկ  
Անգլիայում և Միացեալ Նահանգներում նրա կողմնակից-  
ների թիւը հետզհետէ փոքրանում է. Ֆրանսիայում նրա  
վարդապետութիւնը համարեա յայտնի չէ. Գերմանիայում  
նա քարոզում է շատ սահմանափակ շրջանում և ամեն  
տեղ խլացնում է սօցիալական վարդապետութեան ազ-  
մուկով:

(Շարունակելի)

